

Համաձայն
«Վայոց ձորի մարզպետի 10-ը մարտի
2014 թվականի թիվ 11 որոշման 5-րդ կետի պահանջների

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՍԱԼԼԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<19>> մայիսի 2014թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի մարտի 10-ի N 11 որոշումը՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Նորայր Սիմոնյանի, սոցիալական ապահովության և առողջապահության վարչության առաջատար մասնագետ Յողիկ Բաբայանի, ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Վարդգես Իսախանյանի, աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վանիկ Խոտավերդյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի՝ մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ Սմբատ Խլիսայանի, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Բագրատ Մարգարյանի, ֆինանսական վարչության պետ Ռազմիկ Հայրապետյանի, իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Աիդա Մանասերյանի և ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ Սահակ Ոսկանյանի կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի Սալլիի գյուղական համայնքում իրականացվեց վարչական հսկողություն ոստիկանության, սոցիալական պաշտպանության, պաշտպանության, հողօգտագործման, անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության, արտակարգ իրավիճակների, տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ իրականացվող վարչական հսկողության բնագավառներում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ համաձայն հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ կից հավելվածների:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կրողը արկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:


3. Նշումներ / վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի առարկությունների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/.

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Սալլիի գյուղական համայնքի ղեկավարին:


Նորայր Սիմոնյան (աշխատանքային խմբի ղեկավար)


/ստորագրություն/


Ցողիկ Բարսյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Վարդգես Իսախանյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Վանիկ Խուդավերդյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Աիդա Մանասերյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Սմբատ Խլիխարյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Բագրատ Մարգարյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Ռազմիկ Հայրապետյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Սահակ Ոսկանյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Սամվել Ղազարյան (Սալլիի գյուղական համայնքի ղեկավար)


/ստորագրություն/

2014 թվականի երկրորդ եռամսյակում ՀՀ Վայոց ձորի մարզի Սալլիի գյուղական համայնքում իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ տեղեկանք

Սալլիի գյուղական համայնք

Հավելված 1. Արտակարգ իրավիճակների բնագավառ

| Դրույթների անվանումը: | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|--|-------------|---|--|--|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| <p>1. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն.</p> <p>Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլան</p> <p>Ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտերի ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p> | | | <p>V</p> <p>պլանը չի մշակվել, հայտեր չեն ներկայացվել</p> | <p>Պլանը չի մշակվել, չեն պահպանվել ՀՀ կառավարության 10.06.2011թ. N 919-Ն որոշման պահանջները, ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի <<Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին>> N919-Ն որոշում, կետ 7</p> | <p>Առաջարկվել է մշակել պլանը սահմանված կարգով,</p> <p>առաջարկվել է ներկայացնել անհրաժեշտ հայտեր</p> | <p>մինչև 30.12.14թ</p> |
| <p>2. Համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն</p> | | <p>V</p> <p>/Համայնքի ղեկավարի կողմից սեյսմիկ ռիսկի գնահատման</p> | | <p>Սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ առկա չէ, չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի</p> | <p>Ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել տեխնիկական առաջադրանք սեյսմիկ</p> | |

| | | | | | | |
|--|--|---|--|------------|--|--|
| | | աշխատանքների կատարման հայտ է ներկայացվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն/ | | պահանջները | դիսկի գնահատման քարտեզի մշակման նպատակով | |
|--|--|---|--|------------|--|--|

Հավելված 2. Սոցիալական պաշտպանության բնագավառ

| Դրույթների անվանումը | Ն օրինակառված է | Թեկի է գործիքային պահանջներ | Մասնավորապես | Հայտնաբերված խախտումները | Առաջարկությունների հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|-----------------|-----------------------------|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| <p>1. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝</p> <p>6-րդ հոդվածի 2-րդ մաս. բուժական, դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվող կամ բնակվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները կամ նրանց օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն պահանջելու պարբերաբար ուսումնասիրել խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին՝ երեխաներին տրամադրվող ծառայությունների համապատասխանությունը: Տվյալ ուսումնասիրությունները կազմակերպում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմինը և տեղական ինքնակառավարման</p> | | | <p>V</p> <p><<Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների նկատմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինը ձեռնարկում է միջոցներ օրենքով սահմանված կարգով>></p> | <p>Դրույթի պահանջները պահպանված չէ, չեն պահպանվել Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները . այն է <<Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների նկատմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինը ձեռնարկում է</p> | <p>Առաջարկվել է այսուհետ խստագույնս պահպանել դրույթի պահանջները</p> | <p>1 ամիս</p> |

| | | | | | |
|--|--|---|--|---------------|--|
| <p>մարմինները՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կամ նրանց օրինական ներկայացուցիչների դիմումների հիման վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Նշված կազմակերպություններում պաշտոնատար անձինք պարտավոր են վերացնել բացահայտված խախտումները և տեղեկացնել այդ մասին լիազորված պետական կառավարման մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:</p> <p>11-րդ հոդվածի 1-ին մաս Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները հատուկ հոգաձության և պաշտպանության իրավունք ունեն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որոնք պետք է նպաստեն երեխաների լիարժեք կենսագործունեությանը և զարգացմանը, ինչպես նաև ապահովեն նրանց մասնակցությունը հասարակական կյանքին:</p> | | | <p>միջոցներ օրենքով սահմանված կարգով>>՝ համաձայն որի անհրաժեշտ է իրազեկել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ծնողներին սոցիալական երաշխիքներից օգտվելու հնարավորությունների մասին</p> | | |
| <p>2. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ օրենք) 18-րդ հոդվածի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշմանդամի աշխատանքային զբաղվածության երաշխիքներն ապահովվում են՝</p> <p>1) հաշմանդամների աշխատուժն օգտագործող կազմակերպությունների, հիմնարկների, ինչպես նաև հաշմանդամների հասարակական կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ ֆինանսատնտեսական քաղաքականության իրականացմամբ.</p> <p>2) կազմակերպություններում հաշմանդամներին աշխատանքի ընդունելու համար քվոտաների և հաշմանդամների համար՝ օրենսդրությամբ սահմանված միջոցառումների իրականացմամբ.</p> <p>3) հաշմանդամներին առավել համապատասխանող մասնագիտություններով աշխատանքային տեղերի վերապահմամբ.</p> <p>4) հաշմանդամների համար լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման խրախուսմամբ.</p> <p>5) հաշմանդամին աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուին հաշմանդամին վճարվող աշխատավարձի մասնակի փոխհատուցմամբ:</p> <p>2. Օրենքի 21-րդ հոդված՝ Հայաստանի</p> | <p>V «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտները,</p> | <p>Թեքահարթակ չկա՝ համայնքապետարանում և մշակույթի տանը,</p> <p>չեն պահպանվել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջները</p> | <p>Առաջարկվել է թեքահարթակ կառուցել</p> | <p>1 ամիս</p> | |

| | | | | | |
|---|--|--|--|--|--|
| <p>Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը:</p> | <p>բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը>>:</p> | | | | |
|---|--|--|--|--|--|

Հավելված 3. Հողօգտագործման բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահանջված է | պահանջված | Պահանջված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|--|-------------|-----------|--------------|--------------------------|--|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի | | | V | հաշվառման համապատասխան | Լրացնել հաշվառման գրքերը սահմանված | 2014 թվականի 3- |

| | | | | | |
|--|--|---|--|---------------|---------------------------------------|
| <p>Հանրապետության հողային հաշվեկշի- ող հաստատվելուց հետո համայնքների ղեկավարները և մարզպետները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հողերի հաշվառման համապատասխան գրքերում լրացնում են հաստատված տվյալները:</p> | | <p><< Հայաստանի Հանրապետությ- ան կառավարությա- ն կողմից Հայաստանի Հանրապետությ- ան հողային հաշ- վեկշիող հաստատվելուց հետո համայնքների ղեկավարները և մարզպետները Հայաստանի Հանրապետությ- ան կառավարությա- նն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հողերի հաշվառման համապատասխ- ան գրքերում լրացնում են հաստատված տվյալները>>:</p> | <p>գրքերում հաստատված տվյալները լրացված չեն, չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34- րդ հոդվածի պահանջները</p> | <p>կարգով</p> | <p>որ եռամսյակի ընթացքում</p> |
|--|--|---|--|---------------|---------------------------------------|

Հավելված 4. Պարտադիր լիազորությունների բնագավառ

| Դրույթների անվանումը | 1 օրինակառու. | գրիդողություն | ԿՅ գրիդողություն | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|--|---------------|---------------|----------------------|-----------------------------------|--|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. Համայնքի ավագանու կողմից ՏԻՄ օրենքի պահանջներին համապատասխան ընդունված իր | | | V << Համայնքի | Դրույթի պահանջները պահպանված չեն, | Առաջարկվել է հաստատել ավագանու | 1 ամիս |

| | | | | | |
|---|--|--|---|---|--------|
| կանոնակարգի առկայություն: | | ավագանին ընդունում է իր կանոնակարգը ՏԻՄ օրենքի պահանջներին համապատասխան>>: | . 2ի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16- րդ հոդվածի 1-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է հաստատի իր կանոնակարգը | կանոնակարգը | |
| 2. Համայնքի ավագանու կողմից հաստատված բյուջեի կատարման տարեկան հաշվետվության առկայություն: | | V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը>>: | Դրույթը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> 16-րդ հոդվածի 3 կետի պահանջները՝ համաձայն որի պետք է հաստատաի բյուջեի տարեկան հաշվետվությունը | Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | 1 ամիս |
| 3. Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշման առկայություն: | | V << Համայնքի ավագանին որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ>>: | Դրույթի պահանջները պահպանված չեն, . 2ի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16- րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է հաստատի համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը | Առաջարկվել է ծեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ | 1 ամիս |

| | | | | | |
|---|--|---|---|--|--|
| <p>4. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p> | | <p>V</p> <p><< Համայնքի ավագանին հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է համայնքը >>:</p> | <p>Դրույթի պահանջները պահպանված չեն,</p> <p><u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է որոշում ընդունի համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ</p> | <p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ</p> | <p>Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը</p> |
| <p>5. Համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p> | | <p>V</p> <p><< Համայնքի ավագանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին >>:</p> | <p>Դրույթի պահանջները պահպանված չեն,</p> <p><u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 28.1-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է որոշում ընդունի համայնքի հողերի օգտագործման սխեմաների հաստատման վերաբերյալ</p> | <p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ</p> | <p>1 ամիս</p> |
| <p>6. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p> | | <p>V</p> <p><< Համայնքի ավագանին հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը >>:</p> | <p>Դրույթի պահանջները պահպանված չեն,</p> <p><u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է որոշում ընդունի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի վերաբերյալ</p> | <p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ</p> | <p>1 ամիս</p> |

| | | | | | |
|---|--|---|---|--|---------------|
| <p>7. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշման անկայություն:</p> | | <p>V</p> <p><<Համայնքի ավագանին հաստատում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը >>:</p> | <p>Դրույթը պահպանված չէ,</p> <p><u>Չի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10 կետի, 10.1-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 33 կետի, 32-րդ հոդվածի 10.1 կետի պահանջները՝ համաձայն որի ավագանին պետք է ընդունի համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշում</p> | <p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p> | <p>1 ամիս</p> |
| <p>8. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ որոշման անկայություն:</p> | | <p>V</p> <p><<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>:</p> | <p>Դրույթը պահպանված չէ,</p> <p><u>Չեն պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի պահանջները՝ համաձայն որի ավագանին ընդունում է որոշում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգի հաստատման վերաբերյալ</p> | <p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p> | <p>1 ամիս</p> |
| <p>9. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործավարության կարգի անկայություն:</p> | | <p>v</p> <p>Համայնքի ղեկավարը հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը</p> | <p>Դրույթը պահպանված չէ,</p> <p><u>Չի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարը որոշում է</p> | <p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p> | <p>1 ամիս</p> |

| | | | | | |
|--|--|--|---|--|-----------------------|
| | | | ընդունում աշխատակազմի գործավարության կարգի վերաբերյալ | | |
| 10. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն: | | V «Համայնքի ավագանին հաստատում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը >>: | Դրույթը պահպանված չէ, <u>Չի պահպանվել</u> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10 կետի, 10.1- րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 33 կետի, 32-րդ հոդվածի 10.1 կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին առաջարկություններ է ներկայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի հաստատման վերաբերյալ | Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | 1 ամիս |
| 11. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն: | | V «Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>: | Դրույթը պահպանված չէ, <u>Չեն պահպանվել</u> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16- րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ | Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | 1 ամիս |
| 12. Համայնքի քաղաքաշինական, քնապահպանական, գյուղատնտեսական և այլ | | V «Համայնքի | Դրույթի պահանջը պահպանված չէ, | Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ նշյալ դրույթի | Մինչև 2015 թվականի |

| կադաստրների օրենքով սահմանված կարգով վարում: | | ղեկավարը սահմանված կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրները: | <u>Չի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջը՝ համաձայն որի համայնքի ղեկավարը սահմանված կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրները | պահպանման ուղղությամբ | հունվարի 1-ը |
|---|---|--|--|---|--------------|
| <p>13. Համայնքի ավագանու որոշմամբ հաստատված . համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ) ստեղծված համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի առկայություն:</p> | V | <p><<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>:</p> | Դրույթը պահպանված չէ, <u>Չեն պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի, 54.1-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը | Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | 1 ամիս |